ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀՈՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Տ. Ղևոնդ վրդ.-ի, որով կարգեցաւ յաւագ լուսարար Մայր Տաճարի Ս. Էջմիածնի. թ. 1։

—Յանուն վարչութեան հոգևոր ճեմարանի Մ. Աթոռոյ, որով կարգեցաւ պր. Յովն. Յովհաննիսեան օգնական տեսչի Գ. հոգ. ճեմարանի. թ. 27։

—Յանուն փոխանորդին Գանձակայ Տ. Բագրատ վրդ.-ի, յաղագս գնալոյ ի քննութիւն ի դաւառն Ջիւանշիրու կամ ինքն և կամ մին ի քահանայից Գանձակայ. թ. 47։

—Յանուն Հոգաբարձութեան Թեմ. դպրանոցին Արցախու, որով պատուիրի շարունակել զուսուցութիւն ռոճկի ուսուցիչ Ատամանեանի մի հարիւր ռ. թ. 48։

—Յանուն համայն ժողովրդեան Հնդկաստանի, յաղագս նպաստելոյ Նիւթապէս Գեր. Առաջնորդին իւրեանց Մարգարիտ եպ.-ի ի բացումն նորոգ հոգ. դպրանոցին. թ. 69։

—Յանուն ժողովրդեան Շամախուոյ զկարգմանէ Եսայի արքեպիսկոպոսի յառաջնորդութիւն նոյն թեմին. թ. 90։

—Յանուն թեմական Վրաստ. և Իմերէթի, որով թոյլատրեցաւ նմա կատարել զհոգարարձական ընտրութիւն Մարիամեան Յովնանեան դպրոցի. թ. 94։

—Յանուն վարչութեան Տպարանի յաղագս վճարելոյ Միքայեն Գալուստ Տ. Մկրտչեանի ի տարին երիք հարիւր ռ. ի տպարանէ, որպէս մշտական աշխատակցի Արարատ ամսագրի. թ. 97։

Հայրապետական օրհնութիւն եւ զոհունակութիւն

Կոնդակ օրհնութեան յանուն ընկերութեան հայ—լուսարան ընթերցարանի Հայոց որ ի Գահիրէ Եգիպտոսի. թ. 60։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պր. Գրիգորի Խնչու Մեան Երևանցւոյ, յաղագս արարեալ նորոգութեանց վանուց Գեղարդայ. թ. 84։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Յովսէփայ Աւետիքեան Հախվերաեանց յաղագս նուիրաբերութեան նորա ճեմարանին երկուց մոգական լապտերաց. թ. 117։

Հայրապետական պարգեւք

Կոնդակ վարդապետական լանջախաչի յանուն Կոմիտաս վարդապետի. թ. 26։

-- Յանուն Մարտիրոս քահանայի Զաքիկեան, որով շնորհեցաւ նմա իրաւունս կրելոյ լանջախաչ քահանայական. թ. 23։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

3 Նոյ.—Սինօդը շրջաբերական հրաման ուղարկեց Ռուսաստանի Հայոց բոլոր կոնսիստորեաններին և նրանց միջոցով էլ նոցա ստորագրեալ բոլոր հոգևոր իշխանութիւններին, որպէս զի նոյեմ. 22-ին տօնեն Սորին կայս. մեծութեան Թագաժառանգի Մեծ իշխան Միխայէլ Ալէքսանդրովիչի ծնունդն և անուանակոչութիւնը։

29 Նոյ.—Տանագիրմազ գիւղի բնակիչներից Մկրտիչ Տ. Սահակեան բողոքած լինելով Տ. Յարութիւն քհ. Տէր Թէոդորոսեանի երկու չհաս պսակներ կատարած լինելու մասին, Սինօդը գրեց Երևանի կոնսիստորիային հարկաւոր քննութիւնն անելու համար։

1 Դեկտ.—Սինօդը ընդունած լինելով Նոր Նախիջևանի բնակիչ Մարգարիտ Մկրտչեան Զերնեանցի 100 ռ. նուէրը Էջմիածնի

վանքի համար, խնդրեց Վեհ. Հայրապետից օրհնութեան կոնդակ շնորհել նուիրատուին։

1 Դեկտ. — Վաղարշապատի բնակիչ Ջաֆար Ղուլի Միրզա Մահմմադ Օղլի փափագ յայտնած լինելով մտնել Հայաստաննեայց Ս. Եկեղեցու ծոցը, Սինոդը հրամայեց Վաղարշապատի գործակալին այս մասին հարկաւոր վկայականը և կառավարչական հաստատութիւնը մատուցանել Սինոդին։

17. Դեկտ. — Սինոդը հրամայեց Երևանի Հայոց Կոնսիստորիային, որ Ալէքսանդրապոլի Ս. Մեսրոբ քհ. Գիւլումեանցին ուղարկէ Սիբիր՝ հոգևոր հովուութեան համար, այս մասին ծանուցանելով նաև Աստրախանի թեմի առաջնորդին։

17 Դեկտ. — Տփխիսից Նագոր Ցոմսէփեան իր կնոջ Սոփիայի անբարոյական կեանքի պատճառով ամուսնալուծութիւն էր խնդրած, որը Վրաստ. և Իմերեթի թեմի կոնսիստորիան մերժել էր. Սինոդը յետ քննութեան հրամայեց լուծել նոյն պսակը և թոյլ տալ նորան մտանել ի նոր ամուսնութիւն։

17 Դեկտ. — Կաթոլիկուհի օրիորդ Էմմանուէլա Քրէսցէնցիա Յոհաննա Սոփիա Գրիգորեան Աքիմեանցը ցանկացած լինելով մտնել Հայաստաննեայց Ս. Եկեղեցու ծոցը պատուիրեց Վրաստ. և Իմ. միհ. կոնսիստորիային յարգել նրա խնդիրքը։

22. Դեկտ. — Ցաճիկ Քեսարբաշա Աղդաղայի Մահարրամ Օղլի փափագ յայտնած լինելով մկրտուել Հայ. Ս. Եկեղեցու ծէսով, Ղարաբաղի կոնսիստորիան գրկած էր Սինոդին. Սինոդը հրամայեց նոյն Կոնսիստորիային ուղարկել յիշեալի խնդրագիրն և մի քանի անձերի վկայութիւնը։

24 Դեկտ. — Ալէքսանդրապոլցի Հմայեակ Դէորգեանի կինը Հեղինէ ապօրինի կենակցութիւն ունենալով ուրիշների հետ, Սինոդը հրամայեց լուծել պսակը և թոյլ տալ Հմայեակին կրկին ամուսնանալ։

24 Դեկտ. — Աստրախանի թեմի առաջնորդ Գեր. Արիստակէս արքեպս. քահանայ ձեռնադրած լինելով Բէզկուլեանցին՝ որը գեռ չէր աւարտած զինուորական ծառայութիւնը, Սինոդը հրաւիրեց նրան ի զգուշութիւն և այս մասին գրեց նաև Սատրոպոլի պր. Նահանգապետին։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՆԱԽԱՆՁԻ ԴԻՄ

«Զի ուր հեռ եւ նախանձ՝ անդ է անկարգութիւն եւ ամենայն իրաւ չարք»։ Յակոբ. Գ.

«Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ», ով մարդ, թօթուէ քունը աչքերիդ, ոտքի ելի, գարնան առաւօտ է, աղօթարանը կրակ է կարել, հեռց դարձել։ Վեր կաց, լուսաբացի անուշիկ զեփիւռն թող գայ, շոյէ ճակատդ, փիր բարձրացնէ ծանրացած արտեւանունքներդ, բացուին աչքերդ ու տեսնես Աստեղծողի գաղտակերտը — Բնութիւնը, որ քո օրօրանդ է։ Հոգուդ աչքն էլ բաց, հերիք է ժանգոտած փականքներով կաշկանդես միտքդ. բաց զայն, հրաշալեաց բնութիւնը իւր հովով սթափեցնում է քեզ, եռեւէն լուսոյ ճառագայթ ղրկելու իւր կապուտակ ծոցէն, որ սիրտդ մտնի, խոհեր յուզէ այնտեղ և դու լուռ ու մտախոհ անձնատուր լինիս երկնից լապտերի լուսով քննելու բնութիւնն ու քեզ, որպէս զի կատարուի ամէնէն դժուար պատուէրն իմաստունի թէ «ծանիր զքեզ»։

Ծանիր զքեզ. որչափ դժուարին բան, որպիսի խորին գիտութիւն։ Իրրև մի մատաղ տունկ, իրրև մի անզօր մանուկ աշխարհս ես գալիս մի քանի տասնեակ տարի ճանապարհորդելու։ Ուղեկցութեանդ մէջ հսկայական գործեր ես կատարում. փոքրիկ գլխիդ մէջ ժողովում ես անցած դարերի իմաստութիւնը, երևակայութեանդ մի թռիչքով անտեսանելի աշխարհներն ես թևակոխում։ Դու հանճար ես, դու հերոս ես, դու հրաշալիք։ Բայց .... բայց յանկարծ առջևդ մի փոս է բացուում ու քեզ, նոյնքան անզօր, նոյնքան տկար ու թոյլ հսկայիդ կուլ է տալիս։ Այսպէս դու հրաշալիք ես և դու դատարկու-